

ծրերակային խոցերուն յառաջ գալուն մէջ, Ուրնին պէտք է ընդունիլ թէ Պ. Մեկնիքոֆի կողմէն չարիքին բուն պատճառ համարուած թօքսինները անուղղակի՝ կը ներգործեն, իրենց ազդեցութիւնը բանեցնելով ոչ թէ փողերուն վրայ, այլ այդ փողերուն յանգող ջիղերուն վրայ։ Այս վարկածն է որ հաւանա՛յան կը թուի. ամէն պարագայի մէջ, կարելիե՛րակու- թեան ախտածնութիւնը պէտք ունի աւելի մօտէն ուսումնասիրուելու։

« Եթէ ջղային դրութիւնը դեր մը կը կատարէ այս հիւանդութեան մէջ, անշուշտ ասով լաւ եւս կը բացատրուի ելիկաբական հոսանք- ներով եւ տարսոնալեան դրութեամբ՝ խոցե- րուն եւ թօքսիններուն վրայ գործուած ազ- ցեցութիւնը, ազդեցութիւն որ մինչեւ ցարգ չէր բացատրուեր։ »

Մեկնելով իր այս գիւտէն, Պ. Մանուէլ- զբաղած է այժմ անոր շարունակութիւնն ու պատուան ըլլալ ձգտող աւելի կարեւոր աշխա- տութեամբ մը, որ կը յուսանք պիտի յանգի կատարեալ յալողութեան։

ԻՏԻՍՈՐ ԵՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԳՈՐԾԵՐԸ

Georges Petitի տան մէջ, La Cimaize ընկերութեան ցուցահանդէսին կը մասնակցի նաեւ այս պահուս իտալեր Շահին, շարք մը գծագրութիւններով, որոնք իր ազդանդին յառաջխաղաց ընարչութեանը մէջ նոր ու չքեղ փուլի մը ժամանումը կը յայտնեն. մա- նաւանք՝ ձին, պարուհիները եւ հոյակապ «մերկ»ը, գլուխ-գործոցներ են բանաստեղ- ծական ըմբռնողութեան եւ ուժեղ կենդանի հակիքով արտայայտութեան։ Հաճոյքով կ'իմա- նանք որ սեռանուն գրազէս եւ զիդարուեա- տական քննադատ Կիւսթավ Գան՝ այս ցու- ցադրութեան առթիւ՝ պատրաստելու վրայ է Շահինի ամբողջական դործին վրայ ուսումնա- սիրութիւն մը որ լոյս պիտի տեսնէ ի մօտոյ L'Art et les Artistes ամսագրին մէջ։

ՀԱՅ ԱՍՏՂԱԲԱՇԽ ՄԸ

Յորոնայի Աստղաբաշխական Ընկերութեան օրկան եղող « L'Astronomie » թերթին 1911 յունիսի թիւին մէջ կը կարդանք հետեւեալը. « Պ. Լ. Ասատուրեան (Լոնտոն), կը հաղորդէ ամփոփում մը իր աստղաբաշխական տեսլման, տեսութիւն, նկարագրութիւններ, գծագրու- թիւններ եւ յատկագիծեր »։ Նոյն թերթին յուլիսի թիւին մէջ. « Պ. Լ. Ասատուրեան (Փարիզ) կը հաղորդէ շարունակութեան իր հետազոտութեանց երկնային մարմիններու կազմութեան եւ անոնց շարժման մէջ ելեկ- տրականութեան ներգործութեան մասին։ Մեր պայտօնակցին ձեռնարկած ուսումնասիրու- թիւնները կը ստրածուին Աստղաբաշխութեան ընդգրկած հարցերուն միտ մասին վրայ։ Իր տեսութեանց ինչ ինչ կէտերը կրնան վիճել ըլլալ, բայց այդտեղ անազնի աշխատանք կայ թափուած, զոր հեղինակն անշուշտ սերով պիտի շարունակէ եւ որուն համար քաջակե- րանքները պիտի չպակսին իրեն»։ Նոյն թերթի նոյեմբերի թիւին մէջ. « Պ. Լ. Ասատուրեան (Փարիզ) կը ներկայացնէ շարունակութիւնը Աստղաբաշխութեան մասին իր ուսումնասի- րութեանց։ Այս նոր աշխատութեան մէջ, մեր պաշտօնակիցը կը յիշատակէ քանի մը բնական օրէնքներ, կը բանաձևէ այլ եւ այլ տեսութիւններ Աստղաբաշխութեան եւ Երկրիս արտաքին մթնոլորտին բնութեանը մասին։ » Նոյն թերթին զիկտեմբերի թիւին մէջ. « Պ. Լ. Ասատուրեան (Փարիզ) իր աստղաբաշխական ուսումնասիրութեանց շարքը յառաջ տանելով, ձեռք կ'առնէ միզամածներու հարցը, զոր ինքը կազային մարմիններ չի նկատեր։ »

Պ. Լ. Ասատուրեան, մաթեմատիքի նախկին ուսուցիչ ի Պոլսո, որ այս աստղաբաշխական աշխատութեանց ձեռնարկած է, եւ որ վերջ- յերս Յորոնայի Աստղաբաշխական Ընկերու- թեան անդամ է անուանուած, պատրաստելու վրայ է գրեք մը՝ աստղաբաշխական հարցերու մասին իր յանդուգն եւ ցարգ ծանօթ եղող

սեպութիւնները յեղաշրջել ձգտող տարօրինակ սիսեմով բացատրելու համար . փափագելի է որ մեր հայրենակիցը գտնէր օգնողներ այդ գրքի հրատարակութեանը համար :

ՕՐԻՈՐԴ Մ. ԲԱԲԱՅԵԱՆԻ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ

Քանի մը ամէն է վեր օրերորդ Մ. Բաբայեան հիմնած է երգեցողութեան դասընթացք մը : Իրը երաժշտադէտ ու հայակաւոր երգչուհի է . իրը երգեցողութեան ներուճն ու փորձ ու սուցիչ . շատոնց է որ Օր. Բաբայեան պատուաւոր համբաւի մը տիրացած է Քրիստոսական արուեստագիտական շրջանակներուն մէջ . աւուր մանկէն պերճախօս ապացոյցներէն մին այն է որ այս նորահաստատ դասընթացքին իրենց հովանաւորութիւնը շնորհած են Տրպիսիի , Յօռէի , Վէնասն տիէնտիի պէս տիեզերահռչակ երաժիշտներ , Ժան Փերիէի պէս վարպետ երգիչ մը , եւ Ռոմէն Ռոյանի , Ժիւլիէն Թիէրսօի , Մառնուիի նման գիտուն երաժշտադէտներ :

Արեւմտեան երաժշտութեան մէջ . իր ունեցած նուրբ հմտութեան Օրիորդ Բաբայեան միացուց նաեւ հայկական ժողովրդական երգերու փափուկ ըմբռնումը՝ յորմենակէ կոմիտաս վարպետին առաջնորդութեամբ այդ արուեստին եւս ընտելացաւ . եւ իր Փաթիզ եւ Լօնսոն տուած նուագահանդէսներուն մէջ՝ եւրոպական կտորներու իր ներաճաչակ երգող գնահատուելուն հետ՝ հայկական ժողովրդական երգերն ալ եւրոպացեաց ծանօթացուցած ու սիրցուցած է միշտ :

Իսկ իր անձնուրուիւթիւնը ղէպ ի հայկական ազգասիրական ձեռնարկներ կամ ղէպ ի երիտասարդ սխնակ հայրենակիցներ՝ այնքան մեծ է որքան իր արուեստագէտի դժուարահաճ խղճամտութիւնը . ու եւ ըստեսիրական երեկոյթ չէ եղած , ուր իր աշակցութիւնը յօժարակամ բերած չլրկայ . եւ օժտաւած չունեւոր հայ ուսանողներ որ պէտք ունեցած են իր

գասերուն , միշտ իր մօտ պտած են ամենէն ազնիւ օգնութիւնը . ողբացեալ Մուղունեանը , ինչպէս եւ Պ. Շահմուրատեանը , իր երաժշտական անձնուէր աշակցութիւնը վախճած եւ անկից մեծապէս օգտուած են :

Այս դասընթացքի մանրամասնութեանց մասին տեղեկանալու համար պէտք է դիմել՝ Maison de Pianos Blondel, 28 Rue de Clichy :

Armenia անգլիերէն ամսաթիւրը զոր վերակազմայ Հնչակ . Կոստկցութիւնը հիմնեց՝ ամերիկեան եւ անգլիական հասարակութեանց ծանօթացնելու համար հայկական դասն ու քաղաքակրթութիւնը , այժմ մօտ երկու տարիէ ի վեր իր անձնական ջանքերով կը հրատարակէ Պ. Արշակ Տ. Մանտեանն , եւ թիւերը որ իր տնօրէնութեամբ լոյս կը տեսնեն , պարունակութեամբ ճոխ եւ ալլաղան . օտար կարեւոր գրողներու աշխատակցութեամբ եւ հայ գրական գեղեցիկ էջերու թարգմանութիւններով զարդարուած , մեծապէս յաջող են : Ծանկալի է որ այդ թիւրը , որուն օգտակարութիւնը աւելորդ իսկ է փաստել , դռնէր լուրջ աշակցութիւն ազգասէր Հայերու կողմէն եւ յարատեւէր :

Ճ Ա Ռ

ԱՐՏԱՍՄԱՆՈՒԱԾ

ՓՈՒ ՎԵՐԼԷՆԻ ՄԱՀՈՒԱՆ

ԺԶՊ ՏԱՐԴԱՐՁԻՆ ԱՌՔԻԻ

Փոլ Վերլէնի մահուանէն յետոյ իր հարցողները կազմեցին « Փոլ Վերլէնի բարեկամները » անունով խմբակցութիւն մը , որուն անդամները ամէն տարի՝ մահուանը տարեդարձին օրը կ'երթային՝ եւ իրենց հետ կը հրաւրէին զալ Քրաուսցի եւ օտար գրասէրները՝ Վերլէնի գերեզմանին այցելութեան , եւ նոյն իրերունը կը հաւաքուէին հացկերոյթի մը մէջ :